ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » ——————————2014թ. N ------Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*.

1. Հաստատել լիազորված պետական մարմինների հետ համաձայնեցված «Երևան քաղաքի 2015 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները»՝ համաձայն հավելվածի։
2. Հաստատված ծրագրի ֆինանսավորման համար առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում հատկացումներ նախատեսելու համար ներկայացնել ֆինանսավորման հայտ լիազոր պետական մարմին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Հաստատված է
Երևան քաղաքի ավագանու
« » _____ 2014թ.
N _____-Ա որոշմամբ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

N	Միջոցառման անվանումը	Գումարը /հազ.դրամ/	Համամասնությունը, %
1	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	94136,4	100,0
1,1	Երևան քաղաքի Աջափնյակ և Շենգավիթ վարչական շրջաններում կանաչ տարածքների հիմնում և վերականգնում	94136,4	100,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	94136,4	100,0

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանը միշտ համարվել է էկոլոգիական թեժ կետ, հատկապես քաղաքի օդային ավազանի էկոլոգիական բնութագրիչների պատճառով, որը պայմանավորված է ստացիոնար և շարժական /ավտոտրանսպորտային/ աղտոտման աղբյուրների արտանետումների և դրանց տարածման օդերևութաբանական տվյալներով:

Երևան քաղաքի մթնոլորտային օդի վրա վնասակար ազդեցություն ունեն արդյունաբերական ձեռնարկությունները՝ «Երևան ՋԷԿ» և «Նաիրիտ» գործարանները: Այս գործարանները գտնվում են Շենգավիթ վարչական շրջանում:

Համեմատաբար փոքր տարածքում տրանսպորտային միջոցների առատությունը զգալիորեն վատթարացրել են շրջակա տարածքների օդային ավազանների և հողերի վիճակը:

Աջափնյակ և Շենգավիթ վարչական շրջաններում մարդու առողջության վրա խիստ բացասաբար են ազդում տրանսպորտային արտանետման վնասակար նյութերը: Բնակիչների շնչառական համակարգի վրա ոչ պակաս վնասակար ազդեցություն ունի նաև սովորական փոշին:

Ծանր մետաղներ պարունակող հողը հողմահարման դեպքում մանր մասնիկների տեսքով բարձրանում է վեր, խառնվում օդի հետ և շնչառական ուղիներով թափանցում մարդու օրգանիզմ՝ «հագեցնելով» այն ծանր մետաղներով: Դա հատկապես վտանգավոր է երեխաների համար, որոնք շփվում են հողի և ավազի հետ:

Համաձայն «Ընկերությունների կողմից բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «բ» կետով, ՀՀ 2015թ. Աջափնյակ և Շենգավիթ վարչական շրջաններում կիրականացվեն կանաչապատման աշխատանքներ՝ կապված շրջակա միջավայրի աղտոտման բացասական ազդեցության հետ՝ բնակչության առողջական վիճակի բարելավման, կանաչ

տարածքների հիմնման, վերականգնման նպատակով կանաչ տնկարկների և հանգստի գոտու հիմնման միջոցով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի 2015 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի 2015 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեում նախատեսվում է փոփոխություն՝ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքին համապատասխան բնապահպանական վճարներից Երևան համայնքի բյուջե մուտքագրվող մասհանման 94 136.4 հազ. դրամ գումարի չափով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ